

Հաստատված է “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ
բաժնետերերի 30.10.2009թ արտահերթ
ժողովի կողմից:

Ժողովի նախագահ և “ԱՐՄԵՆԲՐՈԿ”
ԲԲԸ գլխավոր տնօրեն՝ Ա. Կայֆաջյան

Կ. Տ

“ԱՐՄԵՆԲՐՈԿ”

բաց բաժնետիրական ընկերության

Հաճախորդներից հեռացված
տերմինալների միջոցով ֆինանսական
շուկաներում գործարքների կատարման
հանձնարարականների ընդունման և
հաղորդման կանոնակարգ

“ԱՐՄԵՆԲՐՈԿ” բաց բաժնետիրական ընկերության՝ (այսուհետ՝ Ընկերություն) Հաճախորդներից հեռացված տերմինալների միջոցով ֆինանսական շուկաներում գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) մշակված է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան:

Կանոնակարգը կարգավորում է Ընկերության կողմից հաճախորդներից համակարգչային հեռացված տերմինալների միջոցով Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված օտարերկրյա պետությունների ցանկում ընգրկված որևէ պետությունում հրապարակային առաջարկին (վաճառքին) և(կամ) առևտրին (տվյալ պետության արժեթղթերի օրենսդրությամբ սահմանված կարգով) թույլատրված, կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաների ցանկում ընգրկված որևէ կարգավորվող շուկայում առևտրին (տվյալ կարգավորվող շուկայի կանոններով սահմանված կարգով) թույլատրված արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման գործընթացը:

Կանոն 1. Հասկացություններ

Սույն կանոնակարգում կիրառվող հետևյալ հասկացությունները ունեն ստորև բերված նշանակությունները:

“**Հաճախորդ**”. անձ, որը օգտվում է Ընկերության՝ սույն կանոնակարգով սահմանված ծառայություններից:

“**Պատվեր**”. արժեթղթերով գործարքների կնքման նպատակով ներկայացվող Հաճախորդի հանձնարարականը:

“**Արժեթուղթ**”. “Արժեթղթերի շուկայի մասին” ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված արժեթղթերը, ներառյալ CFD գործարքները:

“**CFD գործարք**”. Գործարք, որով կողմերից մեկը որևէ ակտիվի, այդ թվում արժեթղթի, գծով բացում է կարճ դիրք, իսկ մյուսը՝ երկար դիրք, միաժամանակ համաձայնվելով, որ ակտիվի շուկայական գնի անկման դեպքում գործարքի կնքման գնի և շուկայական գնի տարբերությունը երկար դիրք գրաված կողմը վճարում է կարճ դիրք գրաված կողմին, իսկ ակտիվի շուկայական գնի բարձրացման դեպքում շուկայական գնի և գործարքի կնքման գնի տարբերությունը Կարճ դիրք գրաված կողմը վճարում է երկար դիրք գրաված կողմին:

“**Ինֆորմացիոն առևտրային համակարգ (ԻԱՀ)**”. բազմաֆունկցիոնալ ծրագրային մոդուլ, որը Հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ արժեթղթերի ընթացիկ գնանշումները, կատարել տեխնիկական վերլուծություն, ներկայացնել արժեթղթերով գործարքների կնքման պատվերներ, ստանալ ներկայացված պատվերների և դրանց հիման վրա կատարված գործարքների ինչպես նաև իր ունեցած միջոցների ընթացիկ վիճակի վերաբերյալ տեղեկություններ:

“**Գործընկեր**”. ընկերությունը, որին պատկանում են Ինֆորմացիոն առևտրային համակարգերի շահագործման և դրանց օգտագործման հեռացված տերմինալների տրամադրման իրավունքները և որի հետ կնքված պայմանագրի հիման վրա Ընկերությունը իր Հաճախորդներին տրամադրում է Ինֆորմացիոն առևտրային համակարգերի օգտագործման հեռացված համակարգչային տերմինալներ:

“Հեռացված տերմինալ”. ծրագրային մոդուլ, որի միջոցով Հաճախորդը հնարավորություն է ստանում իր անհատական համակարգչից միանալ ԻԱՀ-ին:

“Սպասարկող բանկ”. Բանկ, որում բացված են Ընկերության՝ Հաճախորդներից գումարների ստացման և նրանց գումարների վերադարձման համար օգտագործվող հաշվարկային հաշիվները:

“Պայմանագիր”. Ընկերության և Հաճախորդի միջև կնքված պայմանագիր, որով Ընկերությունը Հաճախորդին մատուցում է սույն կանոններով կարգավորվող ծառայությունները:

“Log-Ֆայլ”. Հաճախորդի համակարգչի վրա և Գործընկերոջ սերվերի վրա տեղադրված էլեկտրոնային արձանագրություն, որում գրանցվում են Հաճախորդի կողմից ԻԱՀ-ով կատարված բոլոր գործողությունների վերաբերյալ տվյալները:

“Առևտրային հաշիվ”. ԻԱՀ-ում Հաճախորդի համար վարվող էլեկտրոնային գրառումների ամբողջությունն է, որում արտացոլվում են ԻԱՀ-ում գործարքներ կատարելու համար նախատեսված Հաճախորդի միջոցները, նրա կողմից տրված և կատարված, ինչպես նաև դեռևս չկատարված պատվերները:

“Դեպո հաշիվ”. Ընկերության կողմից Հաճախորդի արժեթղթերի պահառության շրջանակներում վարվող էլեկտրոնային գրառումների ամբողջությունն է Հաճախորդի, Հաճախորդի հաշվում հաշվառվող Արժեթղթերի, այդ Արժեթղթերի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների, դեպո հաշվառման ընդունման և գրառումների կատարման ժամկետների և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկությունների վերաբերյալ:

Կանոն 2. Հաճախորդին Հեռացված տերմինալի տրամադրումը, Հաճախորդի հետ Պայմանագրի կնքումը և լուծումը

- (ա) Ընկերության և Հաճախորդների միջև հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնակարգով և Հաճախորդների հետ կնքված Պայմանագրերով:
- (բ) Նախքան Պայմանագրի կնքումը Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է իր ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգով սահմանված տեղեկատվությունը:
- (գ) Ֆիզիկական անձ հաճախորդի հետ Պայմանագիր կնքելու և նրան Հեռացված տերմինալ տրամադրելու նպատակով հաճախորդից պահանջվում է՝
- Դիմում, որում պետք է նշված լինի այն ԻԱՀ-ն և դրան միանալու մեթոդը, որով ցանկանում է աշխատել Հաճախորդը,
 - անձնագրի կամ բացառապես լուսանկարով՝ պետական համապատասխան իրավասու մարմնի տված այլ վավեր փաստաթղթի պատճենը, որում պետք է նշված լինի անձի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, բնակության վայրը, ծննդյան ամսաթիվը, վայրը,
 - սոցիալական քարտի պատճենը (առկայության դեպքում),
 - անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաճախորդի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և հարկային հաշվառման վերցնելու փաստաթղթի (ՀՎՀՀ – Հարկ Վճարողի Հաշվառման Համարը) պատճենները,
 - ներդրումային գործունեության բնագավառում հաճախորդի գիտելիքների և փորձի, նրա ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին տեղեկատվություն՝ Ընկերության գործադիր մարմնի սահմանած ձևով:

- (դ) Իրավաբանական անձ հաճախորդի հետ Պայմանագիր կնքելու և նրան Հեռացված տերմինալ տրամադրելու նպատակով հաճախորդից պահանջվում է՝
- Դիմում, որում պետք է նշված լինի այն ԻԱՀ-ն և դրան միանալու մեթոդը, որով ցանկանում է աշխատել Հաճախորդը,
 - պետական գրանցման վկայականի պատճենը,
 - հարկային հաշվառման վերցնելու փաստաթղթի (ՀՎՀՀ – Հարկ Վճարողի Հաշվառման Համարը) պատճենը,
 - կանոնադրության պատճենը,
 - գործադիր մարմնի ընտրման կամ նշանակման մասին որոշման պատճենը (կոլեգիալ գործադիր մարմնի դեպքում՝ դրա անդամների և ղեկավարի ընտրումը կամ նշանակումը հավաստող փաստաթղթի պատճենը),
 - Եթե Ընկերության հետ փոփոխարաբերություններում հանդես է գալու գործադիր մարմնում չընդգրկված այլ լիազորված անձ, այդ անձի լիազորությունները հավաստող փաստաթուղթը,
 - գործադիր մարմնի անդամների և այլ լիազորված անձանց համար սույն կանոնի (բ) կետում նշված փաստաթղթերի պատճենները,
 - ներդրումային գործունեության բնագավառում Հաճախորդի գիտելիքների և փորձի, նրա ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին տեղեկատվություն՝ Ընկերության գործադիր մարմնի սահմանած ձևով:
- (ե) Հաճախորդի հետ Պայմանագիրը կնքվում է և նրան Հեռացված տերմինալ տրամադրվում է հետևյալ դեպքերում.
- Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա պարզ է դառնում, որ ներդրումային գործունեության բնագավառում Հաճախորդի (նրա լիազորված անձի) գիտելիքները և փորձը, նրա ֆինանսական վիճակը բավարար են, որպեսզի նա կարողանա ինքնուրույն արժեթղթերի շուկայում գործարքներ կատարել,
 - Ընկերության և Հաճախորդի միջև նախկինում եղած հարաբերությունները թույլ են տալիս համոզված լինել, որ ներդրումային գործունեության բնագավառում Հաճախորդի (նրա լիազորված անձի) գիտելիքները և փորձը, նրա ֆինանսական վիճակը բավարար են, որպեսզի նա կարողանա ինքնուրույն արժեթղթերի շուկայում գործարքներ կատարել, կամ
 - Հաճախորդը անցել է համապատասխան դասընթացներ, որոնք անցկացվել են Ընկերության համր ընդունելի կազմակերպության կամ մասնագետների կողմից:
- (զ) Հաճախորդից բոլոր պահանջվող փաստաթղթերն ու տեղեկությունները ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սույն կանոնի (ե) կետում նշված պայմանները բավարարված լինելու դեպքում Հաճախորդի հետ կնքվում է Պայմանագիր:
- (է) Պայմանագիրը սահմանում է՝
- Ընկերության և Հաճախորդի իրավունքներն ու պարտականությունները,
 - մատուցվող ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկման և վճարման կարգը,
 - Հաճախորդին հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը,

- Հաճախորդի հետ կապի իրականացման կարգը, ինչպես նաև այն միջոցները, որոնք տվյալ Հաճախորդի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ,
 - Պայմանագրի պահանջների չպահպանման համար կողմերի պատասխանատվությունը,
 - կողմերի միջև առաջացող վեճերի լուծման կարգը,
 - Պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխությունների և լրացումների կատարման, գործողության դադարեցման կարգը, այդ թվում՝ Հաճախորդի կողմից պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավունքը՝ Ընկերությանը առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով,
 - Պայմանագրի դադարեցման դեպքում հաճախորդի միջոցների վերադարձման կարգը,
 - օրենքով նախատեսված պարտադիր այլ տեղեկություններ:
- (ը) Ի լրումն սույն կանոնի (է) կետում նշված տեղեկությունների՝ Պայմանագիրը կարող է պարունակել նաև օրենքին, նորմատիվ իրավական ակտերին, Ընկերության և Գործընկերոջ ներքին կանոններին ու կանոնակարգերին չհակասող այլ դրույթներ:
- (թ) Ընկերությունը կարող է իր գործադիր մարմնի որոշմամբ սահմանաել Պայմանագրի օրինակելի ձև:
- (ժ) Պայմանագրի կնքումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Ընկերությունը կազմակերպում է Հեռացված տերմինալի տեղադրումը Հաճախորդի համակարգչում՝ անհրաժեշտության դեպքում ընդունման-հանձնման ակտով նրան հանձնելով համապատասխան ծրագրային բանալին, նույնականացման անվանումը, ծածկագիրը և համապատասխան ուղեկցող փաստաթղթերը:
- (ժա) Հաճախորդի համակարգչում Հեռացված տերմինալի տեղադրումը իրականացվում է Գործընկերոջ սահմանած կարգով:
- (ժբ) Հեռացված տերմինալի տրամադրումը Հաճախորդին տալիս է բացառապես ԻԱՀ-ի օգտագործման իրավունք: Հաճախորդը չի ստանում ԻԱՀ-ի ծրագրային ապահովումը որևէ կերպ այլ անձի փոխանցելու իրավունք:
- (ժգ) Եթե Հաճախորդին շնորհված անվանումը, ծածկագիրը կամ բանալին որևէ պատճառով հայտնի են դառնում երրորդ անձի, Հաճախորդը անմիջապես պետք է փոխի իր ծածկագիրը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Ընկերությանն ուղարկի գրավոր ծանուցում, խնդրելով փոխել իր բանալին կամ փակել իր Առևտրային հաշիվը և բացել նոր Առևտրային հաշիվ:
- (ժդ) Ընկերությունը Սույն կանոնի (ժգ) կետում նշված գործողությունները կատարում է սույն կանոնի (ժգ) կետում նշված ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում: Նոր բանալին հանձնվում է Հաճախորդին ընդունման-հանձնման ակտով:
- (ժե) Հաճախորդի համակարգչի վրա Հեռացված տերմինալի տրամադրման համար Հաճախորդի համակարգչին և Հաճախորդի համակարգիչը սպասարկող ինտերնետ կապուղուն ներկայացվող պահանջները սահմանում է Գործընկերը:
- (ժզ) Հաճախորդը կարող է միակողմանիորեն լուծել Պայմանագիրը և փակել իր հաշիվները՝ այդ մասին առնվազն 10 (տաս) օր առաջ տեղեկացնելով Ընկերությանը: Պայմանագիրը լուծելուց հետո 3(երեք) բանկային օրվա ընթացքում Ընկերությունը Հաճախորդին է վերադարձնում Հաճախորդի միջոցները՝ Հաճախորդից գանձելով համապատասխան միջնորդավճարները:

Կանոն 3. Առևտրային հաշիվները

- (ա) Հեռացված տերմինալի միջոցով ԻԱՀ-ով գործարքներ կատարելու համար Գործընկերոջ մոտ Հաճախորդի համար բացվում է Առևտրային հաշիվ:
- (բ) Հեռացված տերմինալի միջոցով ձեռքբերված արժեթղթերը (բացառությամբ CFD գործարքների) Հաճախորդի անունով հաշվառելու նպատակով Հաճախորդի համար Ընկերությունում բացվում է Դեպո հաշիվ:
- (գ) Հաճախորդի Առևտրային հաշվի վարումը և ընթացիկ սպասարկումը իրականացվում է Գործընկերոջ սահմանած կարգով:
- (դ) Հաճախորդի Դեպո հաշվի վարումը և ընթացիկ սպասարկումը իրականացվում է Ընկերության պահառության գործունեությունը կարգավորող կանոններով սահմանված կարգով:
- (ե) Առևտրային հաշիվները բացվում են ԱՄՆ դոլարով կամ ռուսական ռուբլով՝ կախված ԻԱՀ-ի տեսակից և այն շուկաներից, որոնցում մուտք է տալիս տվյալ ԻԱՀ-ն:
- (զ) Առևտրային հաշվի տնօրինման իրավունքը Հաճախորդի համար ծագում է դրանում միջոցների մուտքագրման պահից:
- (է) Հաճախորդը կարող է ցանկացած պահի միջոցներ մուտքագրել իր առևտրային հաշվին:
- (ը) Առևտրային հաշվին միջոցներ մուտքագրելու համար Հաճախորդը անհրաժեշտ գումարը մուծում է Ընկերության դրամարկղ, կամ փոխանցում/մուտքագրում է Ընկերության բանկային հաշվին: Ընկերության բանկային հաշվի համարը նշվում է Պայմանագրում:
- (թ) Առևտրային հաշվի համալրման համար նախատեսված գումարը Ընկերության դրամարկղ մուծելու դեպքում այն պետք է արտահայտված լինի ՀՀ դրամով, իսկ Ընկերության հաշվին փոխանցվելու դեպքում՝ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով եվրոյով կամ ռուսական ռուբլով:
- (ժ) Գումարի ավելացումը Հաճախորդի Առևտրային հաշվին կատարվում է Հաճախորդից ստանալուց հետո 4 (չորս) բանկային օրվա ընթացքում:
- (ժա) Եթե Հաճախորդի տված գումարը Առևտրային հաշվի վարման արժույթից տարբերվող արժույթով է, ապա նախքան Առևտրային հաշվին գումարի ավելացումը, այն փոխարկվում է Առևտրային հաշվի վարման արժույթի Ընկերության կամ Սպասարկող բանկի կողմից սահմանած փոխարժեքով:
- (ժբ) Հաճախորդը ցանկացած պահի կարող է իր Առևտրային հաշվից հանել իր ազատ գումարները:
- (ժգ) Առևտրային հաշվից գումար հանելու նպատակով Հաճախորդը առձեռն, էլեկտրոնային փոստով կամ կողմերի համաձայնությամբ որոշված կապի այլ միջոցով Ընկերությանն է ներկայացնում Առևտրային հաշվից գումար հանելու հայտ, որի ձևը սահմանվում է Ընկերության գործադիր մարմնի որոշմամբ:
- (ժդ) Հաճախորդի Առևտրային հաշվից գումարը հանվում և վերադարձվում է Հաճախորդին Առևտրային հաշվից գումարը հանելու հայտը ներկայացնելուց հետո 4 (չորս) բանկային օրվա ընթացքում:
- (ժե) Հաճախորդին գումարը տրվում է անկանխիկ փոխանցման միջոցով՝ նրա կողմից նշված բանկային հաշվին: Գումարը բանկային հաշվին փոխանցվում է ՀՀ դրամով, ռուսական ռուբլով, եվրոյով կամ ԱՄՆ դոլարով: Այն դեպքում, երբ գումարը Հաճախորդի բանկային հաշվին պետք է փոխանցվի ՀՀ դրամից տարբերվող արժույթով, Հաճախորդը պետք է վճարի նաև միջազգային բանկային

փոխանցման համար Սպասարկող բանկի կողմից գանձվող միջնորդավճարը՝ Սպասարկող բանկի սահմանած սակագներով:

- (ժգ) Գումարը Հաճախորդին Առևտրային հաշվի վարման արժույթից տարբերվող արժույթով վճարելու դեպքում այն փոխարկվում է համապատասխան արժույթի Ընկերության կամ Սպասարկող բանկի սահմանած փոխարժեքով:
- (ժե) Արտարժույթային փոխարժեքային տարբերությունների հետ կապված ռիսկերը կրում է Հաճախորդը:
- (ժը) Հաճախորդի կողմից իր Առևտրային հաշվին մուտքագրվող և Առևտրային հաշվից հանվող գումարի նվազագույն չափը սահմանվում է Ընկերության գործադիր մարմնի որոշմամբ:
- (ժթ) Հաճախորդի կողմից իր Առևտրային հաշվից գումար հանելու դեպքում Հաճախորդից գանձվում է միջնորդավճար՝ Ընկերության գործադիր մարմնի կողմից հաստատված չափով:

Կանոն 4. Հաճախորդի կողմից Պատվերների ներկայացման և կատարման կարգը

- (ա) Հաճախորդի կողմից Հեռացված տերմինալից ԻԱՀ ներկայացվող պատվերների տեսակները, դրանց ներկայացման ու կատարման կարգն ու պայմանները սահմանում է Գործընկերը: Պատվերների կատարման կարգն ու պայմանները կարող են ներառվել Պայմանագրում:
- (բ) Գործընկերը բացառիկ իրավունք ունի առանց պատճառաբանման մերժել Հաճախորդի ներկայացրած Պատվերների կատարումը:
- (գ) Հաճախորդների բոլոր Պատվերները անմիջապես գրանցվում են Log-Ֆայլերում, ընդ որում դեռևս չկատարված պատվերները գրանցվում են արդեն փակված դիրքերից առանձին:
- (դ) Հաճախորդի կողմից Հեռացված տերմինալից ԻԱՀ ներկայացվող պատվերներ համարվում են ներկայացված Ընկերությանը և վերջինիս կողմից փոխանցված Գործընկերոջը:
- (ե) Գործընկերը յուրաքանչյուր օրվա ավարտին, որի ընթացքում Հաճախորդների Հաշիվներով գոնե մեկ Գործարք է կնքվել, էլեկտրոնային փոստի կամ իր կայքի միջոցով Ընկերությանը ներկայացնում է հաշվետվություն:
- (զ) Հաճախորդի պահանջով վերը նշված հաշվետվության հիման վրա նույն օրվա ընթացքում Ընկերությունը կազմում և էլեկտրոնային փոստով կամ առձեռն Հաճախորդներին է ներկայացնում հաշվետվություն վերջիններիս կատարած գործարքների վերաբերյալ: **(Կետրը փոփոխվել է “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ-ի բաժնետերերի 30.06.2011թ-ի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ):**
- (է) Եթե Հաճախորդը ներկայացված հաշվետվության վերաբերյալ որևէ առարկություններ ունի, ապա նա պարտավոր է.
 - անմիջապես հեռախոսով կամ կապի այլ հնարավոր միջոցով տեղեկացնել Ընկերությանն այդ մասին,
 - տվյալ հաշվետվության ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր առարկությունները Ընկերությանը գրավոր տեսքով,
 - Մինչև առարկության պարզաբանումը նոր պատվերներ չտալ, նաև հետ կանչել բոլոր նոր գործարքների կնքման ակտիվ Պատվերները:

- (ը) Հաճախորդի կողմից սույն կանոնի (է) կետում նշված պայմաններից որևէ մեկի չկատարման դեպքում, հաշվետվությունը համարվում է Հաճախորդի կողմից հաստատված և չի կարող առարկվել հետագայում:
- (թ) Եթե Ընկերությունը որևէ Հաճախորդից ստանում է հաշվետվության վերաբերյալ առարկություն, ապա պարտավոր է.
 - Տվյալ առարկության ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսով կամ կապի այլ հասանելի միջոցով տեղեկացնել Գործընկերոջը այդ մասին,
 - երկու աշխատանքային օրվա ընթացքում առարկությունները ներկայացնել Գործընկերոջը գրավոր տեսքով:

Կանոն 5. Միջնորդավճարը

- (ա) Հաճախորդներից հեռացված տերմինալների միջոցով ֆինանսական շուկաներում գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման համար Հաճախորդը վճարում է միջնորդավճար, որի չափը որոշվում է Ընկերության գործադիր մարմինը՝ ղեկավարվելով Ընկերության բրոքերային (դիլերային) գործունեության կանոնների 8-րդ կանոնով սահմանված սկզբունքներով և բանաձևով:
- (բ) Հաճախորդից միջնորդավճարի գանձումը կատարում է կամ Ընկերությունը, կամ Գործընկերը: Միջնորդավճարի գանձումը կարող է կատարվել նաև ավտոմատացված ձևով՝ ԻԱՀ-ի միջոցով:
- (գ) Այն դեպքում, երբ միջնորդավճարի գանձումը կատարվում է ավտոմատացված կերպով՝ ԻԱՀ-ի միջոցով, կամ Գործընկերոջ կողմից, հետագայում Ընկերությանը դրա վճարման կարգն ու պայմանները սահմանվում են Ընկերության և Գործընկերոջ միջև կնքված պայմանագրով:

Կանոն 6. Ֆորս-մաժոր

- (ա) Սույն կանոնների առումով Ֆորս-մաժորային հանգամանքները ներառում են (սակայն չեն սահմանափակվում) հետևյալ իրադարձությունները.
 - ցանկացած գործողություն, իրադարձություն կամ երևույթ (ներառյալ, բայց չսահմանափակվելով, ցանկացած գործադուլ, զանգվածային անկարգություններ և քաղաքացիական անհանգստություններ, ահաբեկչական ակտեր, ջրհեղեղներ, արտասովոր եղանակային պայմանաններ, երկրաշարժեր կամ հրդեհներ, արստամբություններ, աշխատանքային կոնֆլիկտներ, դժբախտ պատահարներ, կառավարության գործողություններ, կապի կամ սնուցման խափանումներ, սարքավորումների խափանումներ կամ ծրագրային անսարքություններ և այլն), բերել է ընդհանուր շուկայի կամ մեկ կամ մի քանի գործիքների շուկաների անկայունացման,
 - որևէ շուկայի աշխատանքի կասեցում, լիկվիդացում կամ փակում կամ որևէ իրադարձության բացակայություն, որի վրա Գործընկերը հիմնում է իր գնանշումները, կամ ցանկացած շուկայում առևտրի ոչ ստանդարտ պայմանների ներմուծում:
- (բ) Գործընկերը՝ ունենալով բավարար հիմքեր, իրավունք ունի սահմանել ֆորս-մաժորային հանգամանքների սահմանները: Ֆորս-մաժորային հանգամանքների ի

հայտ գալու դեպքում Գործընկերը պատշաճ կերպով ձեռնարկում է բոլոր համապատասխան միջոցառումները դրանց մասին Ընկերությանը և Հաճախորդներին տեղեկացնելու համար:

- (գ) Ընկերությունը և Գործընկերը ֆորս-մաժորային հանգամանքների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար պատասխանատվություն չեն կրում:

Կանոն 7. Լիազորությունների և պատասխանատվության մասին

- (ա) Հաճախորդի Հեռացված տերմինալից Հաճախորդի ծածկագրի կամ բանալու օգտագործմամբ կատարված բոլոր գործողությունները համարվում են Հաճախորդի կողմից իրականացված և Ընկերությունն ու Գործընկերը պատասխանատվություն չեն կրում դրանց բացասական հետևանքների համար:
- (բ) Գործընկերը կարող է փոփոխել ԻԱՀ-ում առևտրի կանոնները միակողմանի կարգով: Ընդ որում Գործընկերը պարտավորվում է Ընկերությանը և Հաճախորդներին տեղեկացնել փոփոխությունների մասին իր ներքին կանոնակարգերով սահմանված ժամկետներում և եղանակով:
- (գ) Ընկերությունը կարող է փոփոխել սույն կանոնները միակողմանի կարգով: Ընդ որում Ընկերությունը պարտավորվում է Հաճախորդներին տեղեկացնել փոփոխությունների մասին դրանք ուժի մեջ մտնելուց 5 օր առաջ: Տեղեկացումը կատարվում է Ընկերության կայքում տեղեկատվության հրապարակման միջոցով:
- (դ) Տարածայնությունների առաջացման դեպքում Առևտրային համակարգի միջոցով փոխանցված հաղորդագրությունների էլեկտրոնային ֆայլերը, հեռախոսային բանակցությունների ձայնագրությունները, ֆաքսիմիլային կապով փոխանցված հաղորդագրությունները ունեն նույն իրավաբանական ուժը, ինչ բնօրինակները և Կողմերի կողմից դիտարկվում են որպես ապացույցներ:
- (ե) Հաճախորդին արգելվում է.
- ԻԱՀ-ի կողմից օգտագործվող որևէ ծրագիր պատճենել կամ խախտել դրա ամբողջականությունը,
 - օգտագործել իր տրամադրության տակ եղած տեխնիկական միջոցները Ընկերության կամ Գործընկերոջ լոկալ ցանցեր մուտք գործելու համար,
 - բանալին, անվանումը կամ ծածկագիրը տրամադրել չլիազորված անձանց:
- (զ) Եթե Հաճախորդը սույն կանոնակարգով և Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների թերի է կատարում կամ չի կատարում, ապա Ընկերությունը կարող է պահանջել դրանց անհապաղ՝ 1 (մեկ) բանկային օրվա ընթացքում լիարժեք կատարում, իսկ չկատարման դեպքում միակողմանիորեն լուծել Պայմանագիրը և 3 (երեք) բանկային օրվա ընթացքում ետ վերադարձնել Հաճախորդի միջոցները՝ դրանցից պահելով իրեն հասանելիք գումարները:
- (է) Պայմանագիրը կնքելու ժամանակ Ընկերությանը տրամադրած ցանկացած տեղեկատվության փոփոխության դեպքում Հաճախորդը 10 (տաս) բանկային օրվա ընթացքում պետք է տեղյակ պահի Ընկերությանը այդ մասին: Սույն կետով սահմանված գործողության չկատարման հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար Ընկերությունը պատասխանատվություն չի կրում:
- (ը) Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի, Գործընկերոջ կամ երրորդ անձանց մոտ առաջացած տեխնիկական անսարքությունների պատճառով համակարգի անհասանելիության, ուշացումների կամ խափանման արդյունքում Հաճախորդի կրած վնասների և/կամ բացթողնված հնարավորությունների, Պատվերի մուտքագրման և/կամ փոփոխության անհնարինության համար:

Կանոն 8. Եզրափակիչ դրույթներ

- (ա) Բրոքերի և Գործընկերոջ հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:
- (բ) Անհրաժեշտության դեպքում Գործընկերոջ պահանջով Ընկերությունը Հաճախորդին վերաբերող տեղեկատվություն է տրամադրում Գործընկերոջը:
- (գ) Սույն կանոնները և դրա փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ) և ուժի մեջ են մտնում հաստատման պահից: